

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԲ ՀՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ ԲԵԹՂԵՏԷՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԷՆ

**Եւ ասէ ցնոսա հրեշտակն. «Մի՛ երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ
ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն: Զի ծնաւ ձեզ այսօր
Փրկիչ, որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի»:**

(Ղուկաս Բ. 10-11)

Որքան խորթ և տարօրինակ կը հնչեն Ղուկաս Աւետարանիչի խօսքերը. Աստուած մը և Փրկիչ մը՝ որ կու գայ ծնիլ անշուք մսուրի մը մէջ: Արդեօք մսուրն էր միակ պատշաճ տեղը անոր՝ որ ղրկուած էր Ամենաբարձրեալին կողմէ, և կամ ախոռն էր յարմարագոյն տեղը գտնելու Փրկիչ մը....:

Մեր Փրկիչին ծնունդը նկարագրող այս բառերը այնքան կարգացած ենք կամ լսած, որ կը կարծենք թէ անոնք այլեւս դադրած են սքանչացում կամ զարմանք առթելէ: Անոնք կը թուին ըլլալ անիրական, անհաւատալի և նոյնիսկ անկարելի. մինչդեռ Ծննդեան իրաւ հրաշքն ու խորհուրդը կը կայանայ նոյն այն իրողութեան մէջ, որ այդ դէպքերը իրապէս տեղի ունեցած են, որովհետեւ Մանուկ Յիսուսի Բեթղեհէմ ծնունդը պատգամ մը կը պարունակէ իր մէջ, թէ ո՛չ միայն Աստուած գոյութիւն ունի, այլ Ան մեզի կու գայ յանձինս իր որդւոյն՝ Քրիստոսի: Հաւատալ թէ Աստուած վեր է մեզմէ՝ մէկ բան է. իսկ հաւատալ թէ Աստուած մեր զօրութիւնն է և ոյժը՝ ինքնին վստահութիւն և հաւատք ներշնչող զգացում մըն է. սակայն հաւատալ թէ Աստուած ո՛չ միայն Ամենակարող է, ո՛չ միայն ինքնաբաւ է, այլ Ան էմմանուէլն է, մեր հետ եղող Աստուածը, միշտ մեր հետ եւ մօտ եղող, իսկ ասոնցմէ լաւագոյնը՝ մեզ լսող ու հասկցող Աստուածն է:

Յաւիտենական Աստուածն էր որ 2000 տարիներ առաջ այցի կու գար մարդկութեան և այսպէս Անշափելին մոտք կը գործէր մեր աշխարհը, ու այս է իրաւ և յանկուցիչ պատմութիւնը Սուրբ Ծննդեան: Իրապէս Աստուածորդւոյն ծնունդը տիեզերքի մեծագոյն պատմութիւնն է սիրոյ:

Երկնային այս հակադրութիւններու պատմութիւնը մարդկային մեր ոչնչութիւնը կը բարձրացնէ աստուածայինին, յաւերժականի մակարդակին. Աստուած՝ որ միաժամանակ աղբիւրն ու իմաստն է մեր բովանդակ կեանքին, ինքզինք կը յայտնէ յանձինս փոքրիկ ու տկար մանուկի մը, որ կը ծնի աննշմար, գրեթէ անծանօթ գիւղաքաղաքի մը մէջ: Այն պարզ և համեստ պայմաններով որ սկսած էր անոր կեանքը, նոյնպէս ալ ան պարզունակ մարդոց հետ և համեստ տեղերու մէջ սկսաւ իր առաքելութիւնը: Անոր բարեկամները ձկնորսներ, աղքատներ, հալածուածներ և հիւանդներ եղան միշտ: Ան իր խօսքերը համեմեց իմաստալից և գեղեցիկ առակներով, որոնք նոյնպէս առնուած էին պարզ մարդոց առօրեայէն, քանի որ ան կ'ուզէր անոնց զգալ տալ թէ իրենք կրնային իրենց կեանքերն ու գործերը արժեւորել և իմաստաւորել: Ան փորձեց ներշնչել զիրենք և պատրաստել իրենց կոչումին: Ան միշտ ուզեց անոնց հասկցնել թէ էականը ի՞նչ և ո՞րքան ունենալը չէր, այլ աւելի՝ թէ իսկապէս իրենք ի՞նչ կրնային ընել ուրիշներու համար և ի՞նչ պիտի ուզէին դառնալ:

Մարդկութիւնը երբեք չէր լսած այդպիսի զմայլելի երգ մը, ինչպէս որ լսեց Աստուածայայտնութեան այդ լո՛ւռ և սուրբ գիրքերուան մէջ, երգուած հրեշտակներու բերնով. «Փառք ի բարձունս Աստուծոյ, ի յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Խաղաղութիւնը միշտ եղած է մարդուն գերագոյն իղձը, զենիթը՝ բարձրագոյն յոյսի մը,

որուն ան միշտ ձգտած է ստեղծագործութեան արշալոյսին հետ իսկ, առանց սակայն զայն ընելու մեկնակէտը իր ձգտումներուն և երազներուն:

Քրիստոսի անձին միջոցաւ եղած Աստուածայայտնութեան ամբողջ պատգամը հիմնուած է Մարդուն երախտագիտութեան վրայ հանդէպ Աստուծոյ՝ այն մեծ շնորհին համար, որ Ան ցուցաբերեց իրենց նկատմամբ: Եւ այդ օրէն սկսեալ Մարդը բարոյական պարտականութիւն պէտք էր զգար բանալու իր սիրտն ու միտքը, և գոհութիւն յայտնելու Աստուծոյ այն նուէրին՝ Խաղաղութեան համար, որ Քրիստոսի միջոցաւ Ան տուաւ մեզի և որուն այնքան կարօտ եղած էր աշխարհը և տակաւին է, սակայն ըստ երեւոյթին, Մարդը իր կարգ մը դրական յատկութիւններուն կողքին տակաւին չէ յաջողած զարգացնել երախտագիտութեան զգացումը, որուն իբր հետեւանք չէ կրցած ըմբռնել և հասնիլ «Խաղաղութիւն» բառին ամբողջական և կատարեալ իմաստին:

Ծննդեան այս օրհնաբեր տօնին, բոլոր անոնք՝ որոնք կը հաւատան Մարդեղութեան խորհուրդին, թող քաջ գիտնան որ Աստուած մեզի կու գայ յանձինս նօթի մարդու մը, որուն պարտաւոր չենք կերակրել, Ան մեզի կու գայ իբր մենաւոր մարդ մը՝ զոր ստիպուած չենք սփոփել, և վերջապէս Ան մեզի կու գայ իբր թոյլ ու տկար մանուկ մը, զոր խանձարուրելու կարիքը չունինք, և ինչ կրնայինք ուզել աւելի՝ Աստուծոյ մը, որ Ինքզինք կը յանձնէր մեր՝ մարդոց խիղճին: Եւ ճիշդ այս է իրաւ Սէրը, Աստուածային Սէրը: Այնպէս ինչպէս, երբ մեզի մօտ և սիրելի անձ մը կը տառապի, մենք եւս կը տառապինք անոր հետ, որովհետեւ Սէրն ու Տառապանքը միշտ Մարդուն հետ են, նման Աստուծոյ անսակարկ Սիրոյն:

Եթէ մէկ կողմէն Աստուածայայտնութեան տօնը մեզի կը խօսի Սիրոյ և Խաղաղութեան մասին, ան միեւնոյն ատեն մեզի կը փոխանցէ նոյնքան և յոյժ կարեւոր պատգամ մը եւս, թէ Ծննդեան այդ խորհրդաւոր գիշերը Աստուած իրմէ, իր Աստուածութենէն բաժին հանեց մեզի՝ մարդկութեան, և Ինքզինք բաժնեկից ընելու այդ քայլով Ան մեզի տուած եղաւ նոր արժանիք մը, ու մեր կեանքերուն նոր արժէք, իմաստ և նոր տարողութիւն մը, և հաւանաբար այդ իմաստով է որ Քրիստոնեաներ Ծննդեան տօնը վերածած են իրար նուէրներ փոխանակելու և կամ բաժնելու տօնի մը:

Կը պատմուի թէ դարեր առաջ, Զինաստանի մէջ երկու եղբայրներ կային, որոնք հաւասարապէս կ'օգտագործէին իրենց բրինձի արտն ու ջաղացքը: Եղբայրներէն մին ամուսնացած էր ու տէր՝ մեծ ընտանիքի մը, մինչ կրտսեր եղբայրը տակաւին ամուրի էր: Ամէն երեկոյ, ինչ որ բրինձ հաւաքած ըլլային, երկու եղբայրները հաւասարապէս իրար միջեւ բաժնուելով՝ իւրաքանչիւրը կ'երթար իր տունը: Իրիկուն մը, կրտսեր եղբայրը խորհելով կ'ըսէ ինքնիրեն. «Արդար չէ որ ես եւ եղբայրս հաւասարապէս բաժնուինք մեր բրինձը, քանի որ ան մեծ ընտանիք ունի, մինչ ես ոչ ոք»: Ատոր վրայ ան կ'որոշէ ամէն գիշեր, գաղտնօրէն մի քանի պարկ բրինձ տանիլ ու դնել իր եղբոր ամբարը:

Գրեթէ միաժամանակ մեծ եղբայրն ալ կը սկսի մտածել իր կրտսեր եղբոր մասին, ըսելով. «Ճիշդ չէ որ ես եւ եղբայրս բրինձը հաւասարապէս բաժնուինք: Ես ամուսնացած եմ և զաւակներու տէր, որոնք երբ ծերանամ անպայման ինձի հոգ կը տանին, մինչ կրտսեր եղբայրս ոչ ոք ունի, և երբ ամուսնանայ հաւանաբար աւելորդ բեռքի կարիք ունենայ»: Այս եղբայրն ալ իր կարգին կը սկսի ամէն գիշեր գաղտնաբար մի քանի պարկ բրինձ տանիլ կրտսեր եղբոր ամբարը:

Սակայն գիշեր մը երբ երկու եղբայրները իրար տուն բրինձ կը փոխադրէին, այնպէս մը կը պատահի, որ դէմ առ դէմ կու գան, ու անդրադառնալով թէ ինչ կը պատահէր, մեծ սիրով գրկախառնուելով կ'ողջունեն իրար: Կ'ըսուի թէ երկու եղբայրներուն հանդիպման վայրը ներկայիս դարձած է ուխտատեղի մը, քանի որ Աստուած Ինքզինք իր հաւատացեալներուն կը յայտնէ այնպիսի տեղեր՝ ուր մարդիկ

իրար կը գտնեն սիրոյ և զոհողութեան գերագոյն արարքի մը ընդմէջէն: Կ'աղօթենք ի բոլոր սրտէ և կը մաղթենք որ սիրոյ և զոհողութեան այս պատկերը օր մը իրականանայ հո՛ս այս Ս. Երկրին մէջ և Պաղեստինցի և Հրեայ եղբայրներ վերամիանան իրենց երբեմնի եղբայրական սիրով:

Աստուածայայտնութեան այս սուրբ տօնին, միացնենք մեր աղօթքն ու պաղատանքը մեր երանելի նախահայրերու աղօթքին, ըսելով. «Ո՛վ Սիրոյ, Խաղաղութեան և Լոյսի Իշխան, վերստին ծնի՛ր մեր այս անսէր աշխարհին մէջ, և բոլոր լուսահաճանչ սէրով դադրեցուր պատերազմները, հո՛ն ուր կայ խռովութիւն, անարդարութիւն, վիշտ, ցաւ և յուսահատութիւն՝ եկո՛ւր և բուժիչ ներկայութեամբդ բուժէ: Ո՛վ Սուրբ Մանուկ, Դուն՝ որուն թագաւորներ և հովիւներ երկրպագեցին՝ հո՛ն ուր կայ տկարութիւն, փորձութիւն և դառնացած սիրտեր՝ եկո՛ւր ո՛վ ամենօրհնեալ, զօրացո՛ւր և փառացո՛ւր: Դո՛ն Որդի Բարձրեալին, կ'աղաչենք քեզի, վերստին ծնի՛ր այսօր մեզմէ իւրաքանչիւրի սրտին մէջ, որպէսզի միանգամ ընդմիշտ հասկնանք թէ միայն Քու Աստուծային սէրդ է որ կրնայ մեզ դարձնել ամբողջ և կատարեալ: Եկո՛ւր և կրկին լեցո՛ւր մեր դատարկ սիրտերը Աստուծային սիրովդ, գութովդ և խաղաղութեամբդ, հոգ չէ թէ մենք դադրած ենք յիշելէ Անունդ և մանաւանդ Հայրութիւնդ...»:

Թող այս գիշեր մեր ուխտաւոր քոյրերն ու եղբայրները չըլլան լոկ ունկնդիրները հրեշտակներու խաղաղութեան ու սիրոյ աւետիսին, այլ իրենց դարձին իրենց երկիրները՝ իրենց կարգին դառնան արձագանգը այս գիշերուան սիրոյ պատգամ-աւետիսին:

**Ձեզ եւ Մեզ Մեծ Աւետիս,
Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ**

